

Ատամնաբուժական նպաստի մանրամասներ

2023

Այս փաստաթղթում տրամադրված են լրացուցիչ մանրամասներ մեր ծրագրի շրջանակներում ապահովագրված հավելյալ ատամնաբուժական նպաստների մասին: Այս փաստաթղթի կամ ձեր ատամնաբուժական նպաստների մասին լրացուցիչ տեղեկությունների համար կապ հաստատեք Անդամների սպասարկման ծառայության հետ այն հեռախոսահամարով կամ վեբ հասցեով, որը նշված է *Ապահովագրության վկայագրի* հետին կողմում կամ ձեր Անդամի նույնականացման քարտի վրա:

Ատամնաբուժական նպաստների մանրամասները վերաբերում են ստորև ներկայացված ծրագրի նպաստների փաթեթներին: Ծրագրի նպաստների փաթեթը գտնվում է *Ապահովագրության վկայագրի* կազմի վրա՝ ստորին աջ անկյունում:

Նահանգային	Ծրագրի նպաստների փաթեթ	Ծրագրի անվանում
CA	H0562121000	Wellcare Dual Liberty (HMO D-SNP)
CA	H0562129000	Wellcare Dual Align 129 (HMO D-SNP)
CA	H3561001000	Wellcare Dual Liberty Amber (HMO D-SNP)
CA	H5087001000	Wellcare Dual Align 001 (HMO D-SNP)
CA	H5087027000	Wellcare Dual Liberty (HMO D-SNP)

Այս Էջը միտումնավոր է դատարկ թողնվել:

Ապահովագրված ատամնաբուժական նպաստներ. Մեր ծրագիրը պայմանագիր է կնքում Delta Dental of California-ի հետ՝ ստորև նկարագրված ապահովագրված ատամնաբուժական նպաստները տնօրինելու համար: Ծախսերի ցանկացած կիրառելի բաշխման համար տե՛ս 2023թ. *Ապահովագրության վկայագիրը*: Թվարկված ատամնաբուժական պրոցեդուրաները, որոնք ապահովագրված չեն մեր ծրագրի շրջանակներում, անդամի համար կարող են ապահովագրված նպաստ լինել Denti-Cal պետական նպաստի ներքո: Վերանայե՛ք նաև Denti-Cal-ով ապահովագրված նպաստները:

Դուք պետք է գնաք ձեզ համար նշանակված մասնակից մատակարարի մոտ՝ ստանալու համար ապահովագրված ծառայություններ, բացառությամբ շտապ ատամնաբուժական ծառայությունների կամ մասնագետի կողմից մատուցվող ծառայությունների (որը պետք է նախապես լիազորված լինի մեր կողմից):

Ատամնաբուժական նպաստների ժամանակացույց 2023թ.

Կոդ	Նկարագրություն	Դուք վճարում եք
D0100-D0999	I.ԴԻԱԳՆՈՍՏԻԿ - Չապահովագրված	
D1000-D1999	II.ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ	
D2000-D2999	III.ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ	
	Ատամնապսակների համար անհրաժեշտ է նախապես տրված համաձայնություն - Ատամնապսակների թիվը սահմանափակ է՝ երկու ատամնապսակ մեկ բուժառույժ համար մեկ օրացուցային տարում - Սա ներառում է փայլեցում, բոլոր սոսինձները և կապող նյութեր, անուղղակի միջուկի ծածկույթ, հիմքեր, ներդիրներ և թթվային փորագրման պրոցեդուրաներ: - Ատամնապսակների փոխարինման համար անհրաժեշտ է, որ գոյություն ունեցող վերականգնումը լինի 5+ տարեկան: - Անվանական ապրանքանիշով, լաբորատորիայում կամ գրասենյակում մշակված ատամնապսակները/կամրջակները, որոնք արտադրվել են մասնագիտացված տեխնիկայի կամ նյութերի միջոցով, նյութի արդիականացումներ են: Մասնակից ատամնաբույժը կարող է գանձել հավելավճար, որը չի գերազանցի \$325.00-ը՝ ի հավելումն նշված համավճարի: - Ճենապակյա եզրերը կոսմետիկ տարբերակ են: Մասնակից ատամնաբույժը համաձայնել է ճենապակու համար գանձել առավելագույնը \$75.00:	
D2720	Ատամնապսակ - խեժ՝ բարձր ազնիվ մետաղով	Անվճար
D2722	Ատամնապսակ - խեժ՝ ազնիվ մետաղով	Անվճար
D2750	Ատամնապսակ - ճենապակյա՝ ձուլված բարձր ազնիվ մետաղի հետ	Անվճար
D2752	Ատամնապսակ - ճենապակյա՝ ձուլված ազնիվ մետաղի հետ	Անվճար
D2790	Ատամնապսակ - ամբողջովին ձուլված բարձր ազնիվ մետաղ	Անվճար
D2792	Ատամնապսակ - ամբողջովին ձուլված ազնիվ մետաղ	Անվճար

Կոդ	Նկարագրություն	Դուք վճարում եք
D3000-D3999	IV.ԷՆԴՈՂՈՆՏԻԱ – Չապահովագրված	
D4000-D4999	V.ՊԵՐԻՕԴՈՆՏՈՆՈԳԻԱ – Չապահովագրված	
D5000-D5899	VI.ԱՏԱՄՆԱՅԻՆ ՊՐՈԹԵԶԱՎՈՐՈՒՄ (շարժական)	
	- Պրոթեզի հիմային ձևափոխումները սահմանափակ են՝ մեկ անգամ մեկ օրացուցային տարում, և ապահովագրված չեն սկզբնական տեղադրումից հետո վեց ամսվա ընթացքում: - Պրոթեզի կամ մասնակի պրոթեզի փոխարինման համար անհրաժեշտ է, որ առկա պրոթեզը լինի 5+ տարեկան:	
D5670	Փոխարինել բոլոր ատամները և ակրիլ ձուլված մետաղական շրջանակի վրա (վերին ծնոտ)	Անվճար
D5671	Փոխարինել բոլոր ատամները և ակրիլ ձուլված մետաղական շրջանակի վրա, ստորին ծնոտ	Անվճար
D5710	Վերին ծնոտի պրոթեզի հիմային ձևափոխում՝ ամբողջությամբ	Անվճար
D5711	Ստորին ծնոտի պրոթեզի հիմային ձևափոխում՝ ամբողջությամբ	Անվճար
D5720	Վերին ծնոտի պրոթեզի հիմային ձևափոխում՝ մասնակի	Անվճար
D5721	Ստորին ծնոտի պրոթեզի հիմային ձևափոխում՝ մասնակի	Անվճար
D5900-D5999	VII.ԴԻՍԱԾՆՈՏԱՅԻՆ ՊՐՈԹԵԶԱՎՈՐՈՒՄ – Չապահովագրված	
D6000-D6199	VIII.ԻՄՊԼԱՆՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ – Չապահովագրված	
D6200-D6999	IX.ԱՏԱՄՆԱՅԻՆ ՊՐՈԹԵԶԱՎՈՐՈՒՄ, ֆիքսված (յուրաքանչյուր ֆիքսատոր և յուրաքանչյուր կամրջակ ֆիքսված մասնակի պրոթեզի միավոր է [կամուրջ])	
	- Կամրջակները սահմանափակ են՝ մեկ կամրջակ մեկ ատամի համար հինգ օրացուցային տարում - Կամրջակի փոխարինման համար անհրաժեշտ է, որ առկա կամրջակը լինի 5+ տարեկան: - Անվանական ապրանքանիշով, լաբորատորիայում կամ գրասենյակում մշակված կամրջակները, որոնք արտադրվել են մասնագիտացված տեխնիկայի կամ նյութերի միջոցով, նյութի արդիականացումներ են: Մասնակից ատամնաբույժը կարող է գանձել հավելավճար, որը չի գերազանցի \$325.00-ը՝ ի հավելումն նշված համավճարի: - Ճենապակին համարվում է նյութի արդիականացում, որի առավելագույն հավելավճարը գրանցված անդամի համար կազմում է \$150.00 մեկ իմաստության ատամի համար: - Ճենապակյա եզրերը կոսմետիկ տարբերակ են: Մասնակից ատամնաբույժները պայմանավորվել են ճենապակյա տարբերակի համար գանձել առավելագույնը \$75.00:	
D6240	Կամրջակ - ճենապակյա՝ ձուլված բարձր ազնիվ մետաղի հետ	Անվճար
D6242	Կամրջակ - ճենապակյա՝ ձուլված ազնիվ մետաղի հետ	Անվճար
D6250	Կամրջակ - խեժ՝ բարձր ազնիվ մետաղով	Անվճար
D6252	Կամրջակ - խեժ՝ ազնիվ մետաղով	Անվճար

Կոդ	Նկարագրություն	Դուրս վճարում էք
D7000-D7999	X.ԲԵՐԱՆԻ ԽՈՌՈՉԻ ԵՎ ԴԻՄԱԾՆՈՏԱՅԻՆ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ – Չապահովագրված	
D8000-D8999	XI.ՕՐԹՈՂՈՆՏԻԱ – Չապահովագրված	
D9000-D9999	XII.ՀԱՎԵԼՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ – Չապահովագրված	

Սահմանափակումներ.

- Որոշ նպաստների հաճախականությունը սահմանափակ է: Հաճախականության բոլոր սահմանափակումները նշված են վերոնշյալ Նպաստների ժամանակացույցում:
- Մասնակից ատամնաբույժները հավելավճարով կարող են առաջարկել ծառայություններ, որոնք օգտագործում են ապրանքանիշեր կամ ֆիրմային անուններ: Անդամին պետք է առաջարկվի լաբորատորիայում մշակված բարձրորակ ատամնապսակի/կամրջակի ծրագրի նպաստները, որոնք կարող են ներառել՝ ճենապակյա/կերամիկական, ճենապակյա՝ հիմքով, ազնիվ կամ բարձր ազնիվ մետաղով: Եթե անդամն ընտրում է Նյուլթի արդիականացման այլընտրանքը (ապրանքանիշային անվանումը լաբորատորիայում մշակված կամ գրասենյակում մշակված ատամնապսակներ/կամրջակներ, որոնք արտադրվել են մասնագիտացված տեխնիկայի կամ Նյուլթի միջոցով, ներառյալ՝ Captek, Procera, Lava, Empress և Cerec), մասնակից ատամնաբույժը կարող է գանձել հավելավճար, որը չպետք է գերազանցի \$325.00-ը՝ ի լրումն գործող ծախսերի բաշխման: Կապ հաստատեք Անդամների սպասարկման ծառայության հետ ձեր Անդամի Նույնականացման քարտի հեռախոսահամարով, եթե հարցեր ունեք հավելավճարի կամ անվանական ապրանքանիշով ծառայությունների վերաբերյալ:

Բացառություններ.

- Ցանկացած պրոցեդուրա, որը հստակ նշված չէ Նպաստների վերոնշյալ ժամանակացույցում: Թվարկված ատամնաբուժական պրոցեդուրաները, որոնք ապահովագրված չեն մեր ծրագրի շրջանակներում, անդամի համար կարող են ապահովագրված Նպաստ լինել Denti-Cal պետական Նպաստի ներքո: Վերանայեք Նաև Denti-Cal-ով ապահովագրված Նպաստները:
- Ցանկացած պրոցեդուրա, որը պայմանագրային ատամնաբույժի մասնագիտական կարծիքով՝
 - ունի հաջող արդյունքի վատ կանխատեսում և ողջամիտ երկարակեցություն՝ ելնելով ատամի կամ ատամների և/կամ շրջակա կառույցների վիճակից, կամ
 - չի համապատասխանում ատամնաբուժության մեջ ընդունված ընդհանուր չափանիշներին:
- Ծառայություններ՝ բացառապես կոսմետիկ նպատակներով կամ ժառանգական կամ զարգացման արատների հետևանքով պայմանավորված վիճակների համար, որոնցից են քիմիքի ճեղքվածքը, վերին և ստորին ծնոտի արատները, բնածին բացակայող ատամները և ատամները, որոնք գունաթափված են կամ չունեն Էմալ, բացառությամբ բնածին արատներով կամ հետծննդյան անոմալիաներով նորածինների բուժման:

4. Ճենապակյա ատամնապսակներ, մետաղի հետ ձուլված ճենապակյա ատամնապսակներ, ձուլածո մետաղի կամ խեժի հետ ձուլված մետաղական ատամնապսակներ և ֆիքսված մասնակի պրոթեզներ (կամուրջներ) մինչև 16 տարեկան երեխաների համար:
5. Կորած կամ գողացված սարքեր, ներառյալ, բայց չսահմանափակվելով, ամբողջական կամ մասնակի պրոթեզներով և ատամնապսակներով:
6. Պրոցեդուրաներ, սարքեր կամ վերականգնում, եթե նպատակն է փոխել ուղղահայաց չափը կամ ախտորոշել կամ բուժել քունքոսկրաստործնոտային հոդի (TMJ) անոմալ վիճակները:
7. Թանկարժեք մետաղ շարժական սարքերի համար, մետաղական կամ մշտական փափուկ հիմքեր ամբողջական պրոթեզների համար, պրոթեզի ճենապակյա ատամներ, ճշգրիտ հենարաններ շարժական մասնակի կամ ֆիքսված մասնակի պրոթեզների համար (ծածկող պրոթեզներ, իմպլանտներ և դրանց հետ կապված սարքեր) և ամբողջական և մասնակի պրոթեզների անհատականացում և բնութագրում:
8. Իմպլանտների վրա հիմնված ատամնաբուժական սարքեր և ամրակցումներ, իմպլանտների տեղադրում, սպասարկում, հեռացում և ատամնային իմպլանտի հետ կապված բոլոր այլ ծառայությունները:
9. Խորհրդատվություն չապահովագրվող նպաստների համար:
10. Ատամնաբուժական ծառայություններ, որոնք ստացվում են ցանկացած ատամնաբուժական հաստատությունից, բացի նշանակված ներցանցային ատամնաբույժից, նախապես լիազորված ատամնաբույժից, բացառությամբ շտապ ատամնաբուժական ծառայության:
11. Ծառայություններ կամ պարագաներ, որոնք ապահովագրված են հիվանդանոցի, վիրաբուժական/բժշկական (ներառյալ Medicare Advantage) կամ դեղատոմսով դեղերի ծրագրով:
12. Ատամնաբուժական ծախսերը, որոնք կատարվել են ցանկացած ատամնաբուժական պրոցեդուրաների հետ կապված, որոնք սկսվել են մինչև մեր ծրագրով ստացված անդամի իրավասությունը: Օրինակները ներառում են՝ ատամնապսակների համար պատրաստված ատամներ, ընթացքի մեջ գտնվող արմատային խողովակներ, ամբողջական կամ մասնակի պրոթեզներ, որոնք արդեն ձուլվել են:
13. Բուժում կամ սարքեր, որոնք տրամադրվում են պրոթեզավորման ծառայություններում մասնագիտացած պրակտիկայով ատամնաբույժի կողմից:

Այս էջը միտումնավոր է դատարկ թողնվել:

Այս էջը միտումնավոր է դատարկ թողնվել: